ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

2024

Ուղեցույցի հրապարակման նպատակն է ներկայացնել Հայաստանի Հանրապետության սահմանով **ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումները,** որոնց մասին անհրաժեշտ է

ԻՐԱԶԵԿ ԼԻՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԵԼԻՍ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ



1. Ո՞ր ապրանքներն են համարվում «անձնական օգտագործման ապրանքներ», ո՞վ է որոշում ապրանքների նշանակությունը և ինչի՞ց ելնելով

Ապրանքները համարվում են անձնական օգտագործնան, եթե դրանք նախատեսված են ֆիզիկական անձանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ չկապված անձնական, ընտանեկան, տնային և այլ կարիքների համար:

Մաքսային մարմինները որոշում են ապրանքի նշանակությունը ելնելով դրանց քանակից, բնույթից ինչպես նաև ֆիզիկական անձի սահմանահատումների քանակից:

2. Ի՞նչ է երկուղի համակարգը

Երկուղի համակարգը Միության մաքսային սահմանով ուղևորվող ֆիզիկական անձի կողմից անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրի լրացման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կամ չիրականացնելու համար «Կանաչ» կամ «Կարմիր» ուղիներից որևիցէ մեկի ինքնուրույն ընտրության հնարավորություն է:

3. Ե՞րբ կարելի է ընտրել «կանաչ» ուղին

«Կանաչ» ուղին կարելի է ընտրել, եթե մաքսային սահմանով ուղեկցվող ուղեբեռում տեղափոխվում են անձնական օգտագործման այնպիսի ապրանքներ, որոնք ենթակա չեն մաքսային հայտարարագրման:

4. Ե՞րբ է հարկավոր ընտրել «կարմիր» ուղին

«Կարմիր» ուղին պետք է ընտրել, եթե Ձեր ուղեկցող ուղեբեռում առկա են այնպիսի ապրանքներ, որոնք ենթակա են մաքսային հայտարարագրման, ինչպես նաև եթե Դուք համոզված չեք, որ Ձեր կողմից տեղափոխվող ապրանքները ենթակա չեն հայտարարագրման:

5. Ի՞նչ է ենթադրում «կանաչ» ուղու գծի հատումը

«Կանաչ» ուղու գիծը ֆիզիկական անձի կողմից հատելը համարվում է մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների բացակայության մասին ֆիզիկական անձի կողմից արված հայտարարություն:

6. Ի՞նչ անել եթե չգիտեք, թե ուղիներից որն է հարկավոր ընտրել

Եթե Դուք վստահ չեք, որ Ձեզ մոտ առկա ապրանքները ենթակա չեն հայտարարագրման, ապա ընտրեք **«Կարմիր» ուղին:** Այս դեպքում մաքսային տեսուչը Ձեզ կտեղեկացնի մաքսային հայտարարագրի ներկայացման անհրաժեշ-տության առկայության կամ բացակայության մասին:

7. Առանց մաքսային վճարներ վճարելու Ֆիզիկական անձանց կողմից ի՞նչ քանակությամբ ապրանքներ կարող են ներմուծվել ՀՀ տարածք

Ֆիզիկական անձանց կողմից առանց մաքսային վճարների ներմուծվող անձնական օգտագործման ապրանքները (բացառությամբ էթիլ սպիրտի, ալկոհոլային խմիչքների 0,5 %-ից ավելի սպիրտի պարունակությամբ) չեն կարող գերազանցել՝ Հայաստանի Հանրապետության ցամաքային սահմանով ուղեկցող և (կամ) չուղեկցվող ուղեբեռով տեղափոխման դեպքում՝ **10 կգ-ը և 200 եվրոյին համարժեք ՀՀ դրամը,** իսկ օդային տրանսպորտի դեպքում՝ **50կգ-ը և 10 000 եվրոյին համարժեք դրամը:**

8. Առանց մաքսային վճարներ վճարելու ՀՀ սահմանով տեղափոխման համար թույլատրելի չափաքանակներում ներառվու՞մ են արդյոք ֆիզիկական անձի ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռով տեղափոխվող՝ ճամփորդության ընթացքում և (կամ) նշանակման վայրում անհրաժեշտ անձնական օգտագործման օգտագործված ապրանքները:

Ֆիզիկական անձանց կողմից առանց մաքսային վճարների ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների թույլատրելի չափաքանակներում ճամփորդության ընթացքում և (կամ) նշանակման վայրում անհրաժեշտ անձնական օգտագործման օգտագործված ապրանքները չեն ներառվում:

9. Ո՞ր անձնական օգտագործման ապրանքներն են համարվում ճամփորդության ընթացքում և (կամ) նշանակման վայրում անհրաժեշտ անձնական օգտագործման օգտագործված ապրանքներ, և ու՞մ կողմից է իրականացվում դրանց, որպես այդպիսին, որակումը:

Ճամփորդության ընթացքում և (կամ) նշանակման վայրում անհրաժեշտ անձնական օգտագործման օգտագործված ապրանքներ որակելու չափորոշիչները սահմանված են օրենսդրությամբ: Որակումն իրականացնում են մաքսային մարմինները, հաշվի առնելով օրենսդրությամբ նախատեսված չափորոշիչները:

10. Ի՞նչ է հարկավոր անել, եթե ֆիզիկական անձի մոտ առկա ապրանքները գերազանցում են առանց մաքսային վճարներ վճարելու ՀՀ սահմանով ներմուծման համար թույլատրելի չափաքանակները:

Ապրանքների ներմուծման թույլատրելի չափաքանակների գերազանցման պարագայում անհրաժեշտ է լրացնել ուղևորային մաքսային հայտարարագիր ֆիզիկական անձի մոտ առկա բոլոր ապրանքների վերաբերյալ (բացառությամբ անձնական օգտագործման օգտագործած ապրանքների), վճարել մաքսային վճարները գերազանցող մասի համար՝

արժեքից 30%-ի չափով, բայց ոչ պակաս, քան 1 կգ քաշի դիմաց 4 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

11. Ֆիզիկական անձի կողմից ալկոհոլային խմիչքներ ներմուծելու հետ կապված ի՞նչ արգելքներ և սահմանափակումներ են գործում

Արգելվում է 5 լիտրից ավելի էթիլ սպիրտի, 0,5 %-ից ավելի սպիրտի պարունակությամբ ալկոհոլային խմիչքնրի ներմուծումը երրորդ երկրներից, ինչպես նաև այդ ապրանքատեսակների ներմուծումը **18 տարին չլրացած անձանց կողմից:**

Ուշադրություն: 3 լիտրից ավելի ալկոհոլ ներմուծելու դեպքում առաջանալու է դրանք հայտարարագրելու և յուրաքանչյուր լիտրի դիմաց 10 Եվրոյին համարժեք դրամի չափով մաքսատուրքեր և հարկեր վճարելու անհրաժեշտություն:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

12. Ֆիզիկական անձի կողմից ծխախոտ և (կամ) ծխախոտային արտադրանք ներմուծելու հետ կապված ի՞նչ արգելքներ և սահմանափակումներ են գործում:

Արգելվում է

200-հատիկից ավելի սիգարետի, կամ 50 հատիկից ավելի սիգարի (սիգարիլլայի), կամ տաքացվող ծխախոտի ավելի քան 200 գլանակ (ստիք), կամ 250 գ ծխախոտից կամ նշված արտադրատեսակների ընդհանուր ապրանքատեսականուց՝ 250 գ-ից ավելի ընդհանուր քաշով ներմուծումը, ինչպես նաև այդ ապրանքերի ներմուծումը 18 տարին չլրացած անձանց կողմից:

13. Ֆիզիկական անձի կողմից կանխիկ դրամական միջոցների, ճանապարհային չեկերի, դրամական գործիքների ներմուծման ինչպիսի՞ սահմանափակումներ են գործում:

Առանց հայտարարագրման **թույլատրվում է ներմուծել 10 հազար ԱՄՆ դոլարին համարժեք կանխիկ դրամական միջոցները** և (կամ) ճանապարհային չեկերը չգերազանցող միջոցներ (նշված գումարը կանխիկ դրամական միջոցների և ճանապարհային չեկերի հանրագումարն է):

Դրամական գործիքները, բացառությամբ ճանապարհային չեկերի, ենթակա են հայտարարագրման անկախ չափից:

Բանկային քարտերի վրա եղած գումարները չեն հայտարարագրվում:

Ուշադրություն: 100 000 ԱՄՆ դոլարից ավելի (կամ մաքսային մարմնին հայտարարագրի ներկայացման օրվա դրությամբ գործող 100 000 դոլարի փոխարժեքով) գումարը գերազանցող միջոցներ (այդ թվում՝ ճանապարհային չեկեր) հայտարարագրելիս անհրաժեշտ է ներկայացնել դրանց ծագումը հաստատող փաստաթղթեր:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ



14. Ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետություն դեղերի ներմուծման ի՞նչ արգելքներ և սահմանափակումներ են գործում:

Օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման համար առանց հավաստագրի **թույլատրվում է ներմուծել Հայաստանի Հանրապետությունում գրանցված կամ չգրանցված դեղեր՝ մինչև 10 անվանում, յուրաքանչյուրից՝ երեքական սպառողական փաթեթ քանակով, եթե դեղի նշանակման վերաբերյալ փաստաթղթերով** (դեղատոմս կամ քաղվածք հիվանդության պատմագրից կամ բժշկի ստորագրությամբ այլ փաստաթուղթ) հիմնավորված չէ բուժման կուրսի համար անհրաժեշտ ավելի մեծ քանակը:

15. Ի՞նչ առանձնահատկություններ են սահմանված Ֆիզիկական անձի կողմից թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի տեղափոխման համար:

Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի ներմուծումն ու արտահանումն իրականացվում են առանց մաքսային մարմնին լիցենզիա ներկայացնելու՝ բժշկական ցուցումների մասին վկայող համապատասխան բժշկական փաստաթղթերի հիման վրա, որտեղ նշվում է ապրանքի անվանումը և քանակը: Նշված բժշկական փաստաթղթերը կամ վերջիններիս վավերացված պատճենները կազմվում են հայերեն կամ մաքսային մարմնին կարող են ներկայացվել դրանց՝ օտար լեզվից թարգմանված և նոտարական վավերացում ստացած պատճենները:

Հայաստանի Հանրապետություն կարող են ներմուծվել միայն Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող թմրադեղեր և հոգեմետ դեղեր:

Հայաստանի Հանրապետության սահմանը հատող քաղաքացիները կրում են պարտավորություն մաքսային անցակետում իրենց մոտ առկա՝ բժշկի կողմից նշանակված թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի քանակի և ձեռքբերման օրինականության վերաբերյալ հայտարարագիր լրացնելու և մաքսային մարմնին ներկայացնելու մասով:

16. Ֆիզիկական անձի կողմից բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքներիների ներմուծման ի՞նչ արգելքներ և սահմանափակումներ են գործում

Առանց բուսասանիտարական հավաստագրի թույլատրվում է ՀՀ տարածք ներմուծել բարձր բուսասանիտարական ռիսկայնության՝ **մինչև 5 կիլոգրամ ենթակարանտինային ապրանքներ** (բացառությամբ՝ սերմային և արտադրական կարտոֆիլի, աճեցման և գիտահետազոտական նպատակով ներմուծվող նյութերի), ինչպես նաև մինչև 1 հատ դդում, սեխ և ձմերուկ, մինչև 3 փունջ ծաղիկ:

Ուշադրություն: Փունջ է համարվում միասին հավաքված՝ կտրված ծաղիկները, կոկոնները, տերևները, խոտերը և առանց ծաղիկների և կոկոնների բույսերի այլ մասերը՝ թարմ կամ չորացված, որոնց ընդհանուր թիվը չի գերազանցում 15 հատը:

17. Ֆիզիկական անձի կողմից անասնաբուժասանիտարական հսկողության ենթակա ապրանքների ներմուծման ի՞նչ արգելքներ և սահմանափակումներ են գործում

Առանց արտահանող երկրի անասնաբուժասանիտարական հավաստագրի և թույլատվության կարող է ՀՀ տարածք ներմուծվել՝ մինչև 5 կիլոգրամ կենդանական ծագման պատրաստի արտադրանք, եթե առկա է գործարանային փաթեթավորում:

Թույլատրվում է անձնական օգտագործման նպատակով, առանց հատուկ թույլտվության, մինչև 2 գլուխ շան և կատվի տեղափոխումը, եթե ուղեկցող միջազգային անձնագրում առկա է լիազոր մարմնի կողմից կլինիկական հետազոտության վերաբերյալ կատարված նշում՝ որը կատարվել է ուղարկմանը նախորդող 14 օրվա ընթացքում:

- Ապրանքների թույլատրելի չափաքանակները գերազանցող ապրանքները այդ թվում թույլատրելի չափաքանակները գերազանցող ճանապարհային չեկերը, կամ անկախ չափաքանակից հայտարարագրման ենթակա ապրանքները՝ այդ թվում դրամական գործիքները, թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերը չհայտարարագրելը հանգեցնում է վարչական կամ քրեական պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

- **Մաքսանենգությունը, որպես քրեորեն պատժելի արարք, նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:**

Անհրաժեշտ է իմանալ, որ

Մաքսանենգություն է համարվում ստորև նշված ապրանքների միության մաքսային սահմանով կամ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապօրինի տեղափոխումը, որը կատարվել է առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով, կամ դրանց մասին հավաստի տեղեկությունները սահմանված կարգով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու կամ դրանց տեղափոխման համար սահմանված կանոնները, այդ թվում՝ արգելքներն ու սահմանափակումները խախտելու, կամ մաքսային կամ այլ փաստաթղթեր խաբեությամբ օգտագործելու միջոցով:

ա) 10 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափը գերազանցող գումարով կանխիկ դրամական միջոցներ կամ վճարային գործիքներ,

բ) ՀՀ կառավարության 14.01.2021թ. թիվ 35-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքներ կամ մշակութային արժեքներ՝ օրենքով սահմանված խոշոր չափերով,

գ) Թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ, դրանց համարժեք նյութեր (անալոգ) կամ դրանց պրեկուրսորներ կամ դրանք պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութեր, սարքավորումներ կամ գործիքներ կամ մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութ պարունակող բույսեր,

դ) Ռազմական նշանակության արտադրանք, տեխնիկա, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք, հրազեն կամ դրա բաղկացուցիչ մաս, ռազմամթերք,

ե) Ռադիոակտիվ նյութ կամ ռադիոակտիվ աղբյուր, միջուկային նյութ, խիստ ներգործող, թունավոր նյութ, զանգվածային ոչնչացման զենք կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգտագործվող նյութ կամ սարք, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենք կամ երկակի նշանակության ապրանք:

Մաքսային մարմինների պաշտոնատար անձինք մաքսային հսկողության անցկացման համար նշանակություն ունեցող տեղեկությունները ստանալու նպատակներով՝ առանց հարցման արդյունքները ձևակերպելու, **իրավունք ունեն անցկացնելու ֆիզիկական անձանց, նրանց ներկայացուցիչների բանավոր հարցում, կիրառել՝ մաքսային օրենսդրությամբ նախատեսված մաքսային հսկողության այլ ձևեր:**

Հայաստանի Հանրապետության սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումներին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջ՝ **https://src.am/am/getMenusContents/266**:

Հնարավոր է անցում կատարել նաև հետևյալ QR կոդով՝

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

https://www.facebook.com/petekamutner/

https://www.instagram.com/src_armenia/

https://twitter.com/petekamutner

https://www.src.am/am

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ